ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ
<<ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ
ՀՎՀՀ 04446481

28.02.2025թ.

ՀՐԱՄԱՆ 22

«ԿՐԻՍՏԱԼ ԳՌՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խոյ համայնքի <<Կոմունալ սպասարկում և բարեկարգում>> համայնքային հիմնարկի և «Կրիստալ Գռուպ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 04440779, գործունեության հասցե ՀՀ Արարատի մարզ, գ. Գեղանիստ 15փ, 14տ., էլ հասցե Hakobarakelyan88@mail.ru) միջև 2025 թվականի հունվարի 31-ին կնքվել է «ԱՄԽՀԿՍԲՀՀ-ԳՀԾՁԲ-25/01.2» ծածկագրով «ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ » պայմանագիր, որի համաձայն կատարողը պարտավորվում է պատվիրատուին մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրերով և համապատասխան օրացուցային գրաֆիկով նախատեսված աղբահանության ծառայությունները Խոյ համայնքի Արշալույս, Հայթաղ, Հովտամեջ, Դողս, Ամբերդ, Ծաղկունք, Շահումյան, Դաշտ, Այգեշատ բնակավայրերում:

Վերոնշյալ բնակավայրերի վարչական ղեկավարները, բնակիչները ահազանգել են ծառայության թերի կատարման համար, Պատասխանատու ստորաբաժանումը իրականացրել է ուսումնասիրություն, որը ներկայացվել է Պատվիրատուի ղեկավարին, արդյունքում փետրվարի 7-ին ծանուցվել է Խոյ համայնքի Ամբերդ, Այգեշատ, Դողս, Ծաղկունք և Շահումյան բնակավայրերի աղբահանութայն իրականացման թերությունների /թերությունը՝ բաց թողնված փողոցներ, բաց թողնված տնային տնտեսություններ և հիմնարկ ձեռնարկություններ, գրաֆիկի օրերի և ժամերի խախտում, մասնավորապես Դողս բնակավայրում աղբահանության օրը եղել է չորեքշաբթի, սակայն չի իրականացվել, խախտվել է նաև Շահումյան բնակավայրի օրը/

մասին և տրամադրվել է 2 օր ժամկետ շտկման համար: Այս ծանուցմանը չի պատասխանվել և չի կատարվել շտկում:

Փետրվարի 10-ին ևս ծանուցվել է արդեն Խոյ համայնքի Արշալույս, Հայթաղ, Հովտամեջ, Դողս, Ամբերդ, Ծաղկունք, Շահումյան, Դաշտ, Այգեշատ բնակավայրերի աղբահանության թերությունների մասին, տրվել է 2-օրյա ժամկետ շտկման համար, սակայն այս ծանուցումը ևս մնացել է անպատասխան, իսկ շտկումներ չեն կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը՝ 13.02.2025թ. պայմանագիրը միակողմանի լուծվել է:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 17-րդ մասի դ) կետի համաձայն, եթե կնքված պայմանագիրը լուծարվում է չկատարելու հիմքով, ապա մասնակցից գանձվում է որակավորման և պայամագրի ապահովում:

«Կրիստալ Գռուպ» ՍՊԸ-ն կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատրման համար որպես որակավորման և պայմանագրի ապահովումներ Խոյ համայնքի <<Կոմունալ սպասարկում և բարեկարգում>> համայնքային հիմնարկի է ներկայացրել տուժանքի համաձայնագրեր և կից վճարման պահանջագրեր՝ լրացված և հաստատված ընկերության կողմից:

Պայմանագրերը միակողմանի լուծելու, ինչպես նաև որակավորման և պայանագարի ապահովումներ գանձելու մասին համապատասխանաբար 13.02.2025 թվականին ծանուցվել է մասնակցին, ինչպես նաև ծանուցումը հրապարակվել է gnumner.minfin.am պաշտոնական կայքում:

Քանի որ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն հանդիսացել է «Կրիստալ Գռուպ» ՍՊ ընկերությանը սպասարկող բանկ, ուստի «Կրիստալ Գռուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը և վճարման պահանջագրերը 2025 թվականի փետրվարի 24-ի թիվ 41 գրությամբ ներկայացվել է « Ֆասթ Բանկ» ՓԲԸ՝ « Կրիստալ Գռուպ » ՍՊԸ-ից գանձելու « ԱՄԽՀԿՍԲՀՀ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով պայմանագրի համար որակավորման ապահովում՝ 5119500 (հինգ միլիոն մեկ հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում՝ 3413000 (երեք միլիոն չորս հարյուր տասներեք հազար) ՀՀ դրամ:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Հաշվի առնելով, որ առկա են « Կրիստալ Գռուպ » ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.« Կրիստալ Գռուպ » ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումը կայացնելու օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

Հիմնարկի ղեկավար՝ Ա. Սարգսյան